Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 1(49), ապրիլ, 90-100
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.1.090

«ԱՆՁԻ ԻՆՔՆԱՓՈՓՈԽՄԱՆ ՆԵՐՈՒԺ» ՀԱՐՑԱՇԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ CVI ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ՄԱՐԻԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Հոդվածում ներկայացվում են «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի հայերեն տարբերակի տեղայնացման և բովանդակային վավերականացման արդյունքները: Աշխատանքի նպատակն է ստեղծել հուսալի գործիք Հայաստանում մասնագիտության փոփոխության խնդիրներն ուսումնասիրելու համար: Հարցաշարն ուղղված է անձի ինքնափոփոխման պահանջմունքի, ինքնափոփոխման գիտակցված ընդունակության, հնարավորությունների և սեփական փոփոխության հանդեպ սուբյեկտիվ վստահության գնահատմանը: Հարցաշարի լեզվական ադապտացիան իրականացվել է հետ-թարգմանության դասական ընթացակարգով՝ապահովելով բնօրինակի հետ հայեցակարգային և իմաստային համարժեքությունը: Հետազոտությանը մասնակցել է հոգեբանության ոլորտի 9 փորձագետ (ՀՀ բուհերի դասախոսներ և գիտաշխատողներ), որոնց գնահատականների հիման վրա իրականացվել է խառը մեթոդների վերլուծություն՝ համատեղելով բովանդակային վավերականության ինդեքսի (CVI) քանակական հաշվարկը և փորձագետների մեկնաբանությունների որակական վերլուծությունը: Վերլուծության արդյունքում, հիմնվելով I-CVI ցուցանիշների (ընդունելի շեմ ≥ 0.78) և որակական մեկնաբանությունների վրա, սկզբնական 24 պնդումներից ձևավորվել է հարցաշարի վերջնական՝ 23-կետանոց տարբերակը: Սանդղակի ընդհանուր բովանդակային վավերականության ինդեքսը (S-CVI/Ave) կազմել է 0.90, ինչը գերազանց ցուցանիշ է: Ստացված արդյունքները վկայում են, որ գործիքը կարող է արդյունավետորեն կիրառվել ինչպես հետազոտական նպատակներով, այնպես էլ կարիերայի խորհրդատվության և ՄՌԿ ոլորտներում՝ անձի ներքին ռեսուրսները գնահատելու համար: Արդյունքները վկայում են, որ գործիքի ադապտացված տարբերակն օժտված է բարձր բովանդակային վավերականությամբ և հետագա հոգեչափական ուսումնասիրությունների (հուսալիության և կառուցվածքային վավերականության ստուգում) հուսալի հիմք է:

Բանալի բառեր – *անձի ինքնափոփոխման ներուժ, մասնագիտության փոփոխություն, բովանդակային վավերականություն, CVI, հարցաշարի ադապտացիա, անձնային ներուժ*

* **Մարիամ Մանուկյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ
Мариам Манукян – соискатель кафедры общей психологии ЕГУ
Mariam Manukyan – Applicant at the Chair of General Psychology, YSU
Էլ. փոստ՝ m.manukyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0002-7291-4771

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.01.2026
Գրախոսվել է՝ 05.02.2026
Հաստատվել է՝ 02.04.2026
© The Author(s) 2026

Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական արագ զարգացումները հանգեցրել են այն բանին, որ մասնագիտության փոփոխությունը դարձել է սովորական երևույթ, ինչը կարևորագույն հարցեր է առաջացնում անձի հարմարման, ճկունության և ներքին ռեսուրսների վերաբերյալ: Այս համատեքստում առանցքային դեր է խաղում անձնային ներուժը, որի կարևորագույն բաղադրիչներից է անձի «ինքնափոփոխման ներուժը»: Բարձր ներուժով անհատներն ավելի պատրաստ են կարիերայի փոփոխության հետ կապված մարտահրավերներին:

Այս կարևորագույն կոնստրուկտի էմպիրիկ ուսումնասիրությունը և գործնական կիրառությունը (օրինակ՝ կարիերայի խորհրդատվության մեջ) պահանջում են հուսալի և վավեր հոգեդիագնոստիկ գործիքի առկայություն: Ներկայումս հայկական դաշտում գոյություն չունի «անձի ինքնափոփոխման ներուժը» չափող ստանդարտացված և վավերացված գործիք, ինչը էականորեն խոչընդոտում է տեղական ընտրանքի վրա հետազոտությունների անցկացումը: Սույն հոդվածի նպատակն է լրացնել այդ բացը՝ ներկայացնելով հարցաշարի ու բովանդակային վավերականացման գործընթացը և արդյունքները՝ հայկական համատեքստում հետագա կիրառման համար հուսալի հիմք ստեղծելու նպատակով:

Ինչպես նշեցինք, մարդու փոփոխականության խնդիրը ժամանակակից հոգեբանության հիմնական թեմաներից է: «Անձի ինքնափոփոխման ներուժ» հասկացությունը ներառում է մարդու կարողությունը և պատրաստակամությունը՝ գիտակցելու իրավիճակի առաջ քաշած «մարտահրավերները» և փոփոխությունների անհրաժեշտությունը[1]:

Գրիշինան և համահեղինակները իրենց մենագրության մեջ նշում են, որ վերջին տարիներին միջազգային հոգեբանական կոնգրեսներում և կոնֆերանսներում մշտապես քննարկվում է մարդու ինքնագործընթացների (ինքնազարգացում, ինքնակարգավորում) թեման: Նրանք անձի փոփոխությունների թեմային վերաբերող յուրօրինակ մոտեցում են առաջարկում՝ ներմուծելով «ինքնափոփոխության ներուժ» հասկացությունը: Այդ հասկացությունը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ փոփոխությունների կարիքը, գիտակցված ինքնափոփոխությունների ունակությունը, ինքնափոփոխությունների ռեսուրսների առկայությունը և հավատը սեփական ինքնափոփոխությունների հնարավորության հանդեպ[2]:

---

[1] Տե՛ս **Гришина Н.В.** Самоизменения» личности: возможное и необходимое // Вестник Санкт-Петербургского университета. Психология и педагогика. 2018. Т. 8. Вып. 2. С. 126–138. https://doi.org/10.21638/11701/spbu16.2018.202)

[2] Տե՛ս **Гришина Н.В., Манукян В.Р., Муртазина И.Р., Аванесян М.О;** Самоизменения личности: Проблемы, модели, исследования. Коллективная монография под ред. Гришиной Н.В.. – СПб., Изд-во С.-Петерб. ун-та, 2021. – 348 էջ:

Վերը նշված հասկացությունը կարելի է ուսումնասիրել «անձի ինքնափոփոխման ներուժը» հարցարանով: Այն կազմվել է Վ. Մանուկյանի, Ի. Մուրտազինայի ու Ն. Գրիշինայի կողմից՝ անձի ինքնափոփոխման ընդունակությունը դուրս բերելու համար: Հարցաշարի հայերեն տարբերակի ադապտացումն իրականացվել է բնօրինակի հեղինակներից մեկի՝ Վ. Ռ. Մանուկյանի կողմից տրված պաշտոնական թույլտվության հիման վրա: Հարցարանը կազմված է 24 հարցից, որտեղ առաջարկվում է գնահատել պնդումներն ըստ համաձայնության աստիճանի՝ 5 բալանոց սանդղակով: Հարցարանի հարցերը դասակարգված են ըստ չորս գործոնների. 1) «Ինքնափոփոխման պահանջմունք», որը բնութագրվում է նորույթին, բազմազանությանը և փոփոխություններին դրական վերաբերմունքի ձգտմամբ («ուզում եմ փոխվել»), 2) «Գիտակցված ինքնափոփոխման ընդունակություն», որը արտացոլում է մարդու ընդունակությունը գիտակցորեն աշխատելու ինքն իր վրա և պլանավորված փոփոխություններին հասնելու կարողությունը («պետք է փոխվել»), 3) «Հավատ ինքնափոփոխությամբ հնարավորության հանդեպ», ինչը ներառում է այն ոչ բացահայտ համոզմունքը, որ մարդիկ կարող են գիտակցաբար փոխել իրենց բնույթը և վարքը կյանքի ընթացքում, 4) «Ինքնափոփոխման հնարավորինություն», որը կապված է հոգեկան ռիգիդության հետ և փոփոխություն պահանջող իրավիճակներում ճկունության աստիճանի հետ («կարող եմ փոխվել»)[3]:

Նախքան բովանդակային վավերականացման փուլին անցնելը իրականացվել է հարցաշարի լեզվական ադապտացիա՝ հետթարգմանության դասական ընթացակարգի կիրառմամբ: Հարցաշարի ռուսերեն տարբերակը սկզբնապես թարգմանվել է հայերեն՝ երկու լեզուների անկախ մասնագետների կողմից:

Այնուհետև ստացված հայերեն տարբերակը մեկ այլ անկախ մասնագետի կողմից, ով ծանոթ չէր բնօրինակ տեքստին, հետ է թարգմանվել ռուսերեն: Վերջին փուլում համեմատել ենք բնօրինակ ռուսերեն տարբերակը և թարգմանված տարբերակը՝ բացահայտելու և լուծելու իմաստային և ոճական անհամապատասխանությունները: Այս գործընթացի նպատակն էր ապահովել ոչ թե բառացի, այլ հայեցակարգային և իմաստային համարժեքություն՝ ստանալով հարցաշարի նախնական հայերեն տարբերակը, որն էլ արդեն ներկայացվել է փորձագիտական գնահատման:

Բովանդակային վավերականության գնահատման համար ձևավորվել է փորձագիտական խումբ՝ բաղկացած 9 մասնագետից (ՀՀ բուհերի դասախոսներ և գիտաշխատողներ), որոնց կողմից գնահատվել է հարցաշարի 24 պնդումը: Հետազոտությունը իրականացվել է առցանց: Հարցաշարի ամեն պնդում փորձագետներին ներկայացվել է առանձին, որտեղ նշված է եղել, թե ինչ գործոն է չափում տվյալ պնդումը, ինչպես նաև՝ պնդման բնօրինակ (ռուսերեն)

[3] Տե՛ս **Манукян, В.Р., Муртазина, И.Р., Гришина, Н.В**. (2020). Опросник для диагностики потенциала самоизменений личности. *Консультативная психология и психотерапия, 28*(4), 35–58. https://doi.org/10.17759/cpp.2020280403

տարբերակը: Փորձագետներին առաջարկվել է գնահատել պնդման հայերեն թարգմանության համապատասխանությունը գործոնին: Իսկ գնահատումը իրականացվել է 1-5-բալանոց սանդղակով, որտեղ 1 միավոր է տրվում, եթե ընդհանրապես չի համապատասխանում, իսկ 5 միավոր՝ երբ լիովին համապատասխանում է: Քանակական գնահատումից բացի, փորձագետները թողել են մեկնաբանություններ և առաջարկներ: Վերջինիս որակական վերլուծության հիման վրա էլ իրականացրել ենք փոփոխություններ: Արդյունքների վերլուծության համար կիրառել ենք խառը մեթոդների հետազոտությունը, որը համատեղում է որակական ու քանակական մեթոդները: Մենք կիրառել ենք հաջորդական բացատրական մոտեցումը, որտեղ քանակական տվյալները վերլուծվել են նախապես, իսկ դրանից հետո վերլուծվել են որակական տվյալները՝ լրացնելով նախորդները[4]:

Քանակական տվյալների վերլուծության համար մենք կիրառել ենք բովանդակային վավերականության ինդեքսի (Content Validity Index - CVI) մեթոդը: Բովանդակային վավերականությունը սահմանվում է որպես աստիճան, որը գնահատում է, թե որքանով են գնահատման գործիքի բաղադրիչները համապատասխանում չափվող կոնստրուկտին: Իսկ վերջինիս քանակական ցուցիչ է բովանդակային վավերականության ինդեքսը (CVI)[5]:

Այս մեթոդը թույլ է տալիս քանակականորեն գնահատել փորձագետների համաձայնության աստիճանը յուրաքանչյուր պնդման բովանդակության վերաբերյալ: Մեր դեպքում 5-բալանոց գնահատման սանդղակը դիտարկել ենք երկու մասով, որտեղ 4 (տեղին է) և 5 (լիովին տեղին է) գնահատականները համարել ենք համապատասխան, իսկ 1, 2, 3 գնահատականները՝ անհամապատասխան: Վերլուծությունը կենտրոնացրել ենք երկու հիմնական ցուցանիշի վրա. I-CVI (Item-CVI): Առանձին կետի վավերականության ինդեքս, որը հաշվարկվում է որպես «համապատասխան» գնահատական տված փորձագետների համամասնությունը (թիվը՝ բաժանած փորձագետների ընդհանուր թվի վրա): 9 փորձագետից բաղկացած խմբի համար որպես նվազագույն ընդունելի շեմ մենք սահմանեցինք 0.78-ը: S-CVI/Ave (Scale-CVI, Average): Ամբողջ սանդղակի միջին վավերականության ինդեքսը մենք հաշվարկել ենք որպես վերջնական սանդղակում պահպանված բոլոր կետերի I-CVI ցուցանիշների միջին թվաբանական: Ընդունված է S-CVI-ի ≥ 0.90 ցուցանիշը գնահատել որպես գերազանց: Յուրաքանչյուր պնդման վերաբերյալ վերջնական որոշում

[4] Տե՛ս **Taherdoost H.** What are Different Research Approaches? Comprehensive Review of Qualitative, Quantitative, and Mixed Method Research, Their Applications, Types, and Limitations. Journal of Management Science & Engineering Research, 2022, 5 (1), էջ 53-63. ff10.30564/jmser.v5i1.4538ff. ffhal-03741840f

[5] Տե՛ս **Yusoff MSB.** ABC of content validation and content validity index calculation. Education in Medicine Journal. 2019;11(2):49–54. https://doi.org/10.21315/eimj2019.11.2.6

կայացնելու համար մենք մշակել ենք որոշումների կայացման կանոնների համակարգ՝ հիմնվելով Polit-ի և Beck-ի սահմանած CVI-ի շեմային արժեքների վրա և ինտեգրելով դրանք փորձագետների կողմից տրված որակական մեկնաբանություններին: Այն պնդումները, որոնց I-CVI ցուցանիշը ցածր էր 0.78 շեմից, հեռացվել են: Բարձր I-CVI ունեցող և էական դիտողությունների չարժանացած պնդումները պահպանվել են, իսկ սահմանային (I-CVI = 0.78) կամ կարևոր որակական մեկնաբանություններ ունեցող կետերը ենթարկվել են վերանայման՝ փորձագետների առաջարկների հիման վրա[6]:

Սանդղակի ընդհանուր բովանդակային վավերականության ինդեքսը կազմել է 0.89 (S-CVI/Ave), որը վկայում է այն մասին, որ բովանդակային վալիդության ցուցանիշը բարձր է (S-CVI/Ave ≥ 0.90 համարվում է գերազանց, S-CVI ≥ 0.80 համարվում է լավ): Այսինքն՝ վիճելի պնդումների հեռացումից կամ վերանայումից հետո սանդղակը բովանդակային առումով բարձր կիրառելիություն կունենա: Սանդղակի CVI ցուցանիշները, ըստ յուրաքանչյուր պնդման, կարող ենք տեսնել աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարցարանի բովանդակային վավերականացման քանակական ցուցանիշներ

№	Պնդում	CVI	Որոշում
1	Ցանկացած փոփոխություն ինձ դիսկոմֆորտ է պատճառում:	0.89	Պահպանել
2	Ես սիրում եմ ռիսկ և արկածներ:	0.78	Վերանայել
3	Ինձ համար կարևոր է կյանքում շատ տարբեր գործեր անելը:	0.78	Վերանայել
4	Մարդիկ ընդունակ չեն փոխելու իրենց որոշակի ուղղությամբ:	1	Պահպանել
5	Ես փորձում եմ օգտագործել տարբեր հնարավորություններ՝ նոր փորձ ձեռք բերելու և սեփական կարողությունները զարգացնելու համար:	1	Պահպանել
6	Ինձ դուր է գալիս տիրապետել գործունեության նոր տեսակների:	1	Պահպանել
7	Ես սիրում եմ դնել նպատակներ և պլանավորել դրանց իրականացումը:	0.78	Վերանայել
8	Ես ձգտում եմ զարգացնել իմ պոտենցիալ կարողությունները:	1	Պահպանել
9	Կարծում եմ, որ մարդիկ ի զորու չեն էականորեն փոխելու իրենց բնավորությունը:	1	Պահպանել

[6] Տե՛ս **Polit DF, Beck CT**. The content validity index: are you sure you know what's being reported? Critique and recommendations. Res Nurs Health. 2006 Oct;29(5):489-97. doi: 10.1002/nur.20147. PMID: 16977646

10	Ես դժվարությամբ եմ փոխում իմ համոզմունքները։	1	Պահպանել
11	Մարդիկ կյանքի ընթացքում հոգեբանական փոփոխություններ են կրում։	0.67	Հեռացնել
12	Ընտրության անհրաժեշտության դեպքում ես սովորաբար նախընտրում եմ լավ ծանոթը և հասկանալին, քան նորը և անսովորը։	0.89	Պահպանել
13	Ես բաց եմ ամեն նոր բանի համար։	0.78	Վերանայել
14	Փոխվելու, «անձնային աճի» անհրաժեշտությունը ինձ դրական հույզեր է պատճառում։	0.89	Պահպանել
15	Ես շատ եմ մտահոգվում, երբ ստիպված եմ լինում հրաժարվել սեփական տեսակետից և ընդունել մեկ այլը, նույնիսկ եթե հասկանում եմ դրա անհրաժեշտությունը։	0.78	Վերանայել
16	Ես ուրախությամբ ձեռնամուխ եմ լինում աշխատանքին, եթե գիտեմ, որ այն ինձանից նոր հմտություններ է պահանջելու։	0.89	Պահպանել
17	Ես ընդունակ եմ իմ մեջ որոշակի որակներ զարգացնելու։	0.89	Պահպանել
18	Ինձ համար կարևոր է, որ ունենամ մշտական տեղ աշխատավայրում, սեղանի շուրջը, պարապմունքների ժամանակ և այլն։	0.89	Պահպանել
19	Մարդկանց սովորաբար հաջողվում է ազատվել այն սովորություններից, որոնք իրենց դուր չեն գալիս։	1	Պահպանել
20	Ես համարում եմ, որ ցանկության դեպքում մարդը կարող է փոխել իր բնավորությունը։	0.78	Վերանայել
21	Ընտրության դեպքում ես կնախընտրեմ նորը, քան սովորականը։	0.89	Պահպանել
22	Անհրաժեշտության դեպքում մարդիկ կարող են փոխել իրենց վարքը, բայց ոչ հիմնական գծերը։	0.78	Վերանայել
23	Իմ կյանքը շատ քիչ է կախված հանգամանքներից, քանի որ ես փորձում եմ ինքս փոփոխություններ անել։	1	Պահպանել
24	Ես ինձ զգում եմ իմ կյանքի «հեղինակ»։	0.89	Պահպանել

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 24 պնդումներից 16-ի I-CVI ցուցանիշը 0.89 կամ 1 միավոր է, սակայն ունենք 7 կետ, որոնց ցուցանիշները սահմանային են՝ 0.78 միավոր (պնդումներ 2, 3, 7, 13, 15, 20, 22). քանի որ սա ընդունելիության նվազագույն սահմանն է, պնդումները ենթարկվել են վերաձևակերպման՝ հիմնվելով փորձագետների տված մեկնաբանությունների որակական վերլուծության վրա։ Առավել «խնդրային է» 11-րդ պնդումը,

որի I-CVI ցուցանիշը 0.67 միավոր է, որը զգալիորեն ցածր է ընդունելիության 0.78 շեմից: Հաշվի առնելով սա՝ որոշում է կայացվել հեռացնել այս կետը հարցաշարի վերջնական տարբերակից:

Թեև հաջորդիվ քննարկվող բոլոր պնդումների ցուցանիշները ֆորմալ առումով ընդունելի են (CVI = 0.78), հարկ ենք համարել վերանայել դրանք՝ հիմնվելով փորձագետների տված պատասխանների որակական վերլուծության արդյունքների վրա: Դիտարկենք հետևյալ պնդումը. «2. Ես սիրում եմ ռիսկ և արկածներ», որը հարցաշարում հանդես է գալիս որպես «ինքնափոփոխման պահանջմունք» գործոնի հակադարձ ցուցիչ, փորձագիտական գնահատման ընթացքում քննադատության արժանացավ, քանի որ փորձագետները համաձայն չէին դրա հակադարձ լինելու տրամաբանությանը: Չնայած այս դիտարկմանը՝ որոշում կայացրինք պահպանել այն. ստորև ներկայացված է հիմնավորումը: Ըստ հարցաշարի հեղինակների՝ «ինքնափոփոխման հնարավորություն» գործոնը մեկնաբանվում է որպես հոգեբանական ռիգիդության ցուցիչ, այսինքն՝ փոփոխություններ պահանջող իրավիճակում ճկունության աստիճան[7]: Այս համատեքստում կարելի է ենթադրել, որ նպատակաուղղված ինքնափոփոխումը պահանջում է որոշակի «դրական ռիգիդություն»՝ հետևողականություն, որը «Մեծ հնգյակի» տեսության մեջ համապատասխանում է «Բարեխղճություն» անձնային գծին: Միևնույն ժամանակ, «ռիսկի և արկածների» նկատմամբ հակվածությունը «Սենսացիաների որոնման» (Sensation Seeking) դրսևորում է[8], որը, ըստ մի շարք հետազոտությունների, բացասական փոխկապակցվածություն ունի «Բարեխղճության» հետ[9]: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ ռիսկի և արկածների նկատմամբ հակվածությունը կարող է վկայել այն հետևողականության և ինքնակարգավորման պակասի մասին, որը անհրաժեշտ է ինքնափոփոխման համար, ինչն էլ հիմնավորում է պնդման հակադարձ բնույթը:

Հաջորդ պնդումը՝ «3. Ինձ համար կարևոր է կյանքում շատ տարբեր գործեր անելը», ենթարկվել է վերանայման՝ հիմնվելով փորձագետների որակական մեկնաբանությունների վրա: Վերջնական տարբերակում այն

---

[7] Տե՛ս **Манукян, В.Р., Муртазина, И.Р., Гришина, Н.В.** (2020). Опросник для диагностики потенциала самоизменений личности. *Консультативная психология и психотерапия, 28*(4), 35–58. https://doi.org/10.17759/cpp.2020280403

[8] Տե՛ս **Zuckerman, M.** (2007). Sensation Seeking. In M. Zuckerman, *Sensation seeking and risky behavior* (էջ 3–49). American Psychological Association. https://doi.org/10.1037/11555-001

[9] Տե՛ս **Aluja, A., Garcıa, Ó., & Garcıa, L. F**. (2002). A comparative study of Zuckerman's three structural models for personality through the NEO-PI-R, ZKPQ-III-R, EPQ-RS and Goldberg's 50-bipolar adjectives. Personality and Individual Differences, 33(5), 713-725:

ձևակերպվել է հետևյալ կերպ. «Ինձ համար կարևոր է կյանքում շատ տարբեր բաներով զբաղվելը»: Հաջորդ պնդումն է՝ «7. Ես սիրում եմ դնել նպատակներ և պլանավորել դրանց իրականացումը»: Փորձագետներից երկուսի կարծիքով՝ արժե պնդման վերջին հատվածը վերաձևակերպել, դարձնել՝ դրանց հասնելը, երկու այլ փորձագետներ առաջարկում են փոխել պնդման սկզբի հատվածի շարադասությունը: Այսպիսով՝ պնդման վերջնական տարբերակն է «Ես սիրում եմ նպատակներ դնել ու պլանավորել դրանց հասնելը»: Հաջորդ պնդումն է «13. Ես բաց եմ ամեն նոր բանի»: Փորձագետների կարծիքները կիսվել են. նրանցից երկուսը առաջարկում են վերջում ավելացնել *համար* բառը, իսկ մյուս երկուսը՝ *առջև* բառը: Մենք հակված ենք «Ես բաց եմ ամեն նոր բանի համար» տարբերակին: Հաջորդ պնդումն է «15. Ես շատ եմ մտահոգվում, երբ ստիպված եմ լինում հրաժարվել սեփական տեսակետից և ընդունել մեկ այլը, նույնիսկ եթե հասկանում եմ դրա անհրաժեշտությունը»: Մեկնաբանությունները հաշվի առնելով՝ պնդման վերջնական տարբերակն է. «Ես շատ եմ անհանգստանում, երբ հարկադրված եմ լինում հրաժարվել սեփական տեսակետից և ընդունել մեկ այլ տեսակետ, նույնիսկ եթե հասկանում եմ դրա անհրաժեշտությունը»: Հաջորդ պնդումն է՝ «20. Ես համարում եմ, որ ցանկության դեպքում մարդը կարող է փոխել իր բնավորությունը»: Փորձագետներից երեքը առաջարկել են ավելացնել «բավականին ուժեղ», երկուսը՝ «էականորեն» արտահայտությունները: Պնդման վերջնական տեսքն է «Ես համարում եմ, որ ցանկության դեպքում մարդը կարող է էականորեն փոխել իր բնավորությունը»: Վերջնական տարբերակում նախապատվությունը տրվեց «էականորեն» մակբային, քանի որ այն բնութագրում է փոփոխության որակական խորությունը, ի տարբերություն «բավականին ուժեղ» տարբերակի, որը նկարագրում է միայն դրա ինտենսիվությունը: Վերջին պնդումն է. «22. Անհրաժեշտության դեպքում մարդիկ կարող են փոխել իրենց վարքը, բայց ոչ հիմնական գծերը»: Փորձագետները առաջարկել են փոփոխել պնդման վերջին հատվածը, այսպիսով, վերջնական տարբերակն է՝ «Անհրաժեշտության դեպքում մարդիկ կարող են փոխել իրենց վարքը, բայց հիմնական գծերը անփոփոխ են»:

Այսպիսով, 24 պնդումներից 7-ը ենթակա էին վերանայման, որից 6-ում կատարեցինք փոփոխություններ՝ հիմնվելով փորձագետների կարծիքների որակական վերլուծության վրա: Հարկ է նշել, որ վերանայման ենթակա պնդումները չէին վերաբերում մեկ գործոնին, այլ հինգ գործոնների մեջ բաշխված էին հավասարաչափ: Սանդղակի կրած փոփոխությունները բարձրացրին S-CVI/Ave գործակիցը՝ դարձնելով այն ավելի վավերական: Հետաքրքիր է նշել, որ թեև սկզբնական (24 կետ) և վերջնական (23 կետ)

սանդղակների S-CVI/Ave ցուցանիշները կլորացնելիս երկուսն էլ 0.89 են, դրանց իրական արժեքները և մեթոդաբանական նշանակությունը տարբեր են, քանի որ 11-րդ պնդման հեռացումից հետո միջինը կազմեց 0.895, իսկ մինչ այդ 0.885 էր, թվային տարբերությունը թվում է չնչին, բայց նշանակությունը կարևոր է: Իրականացված բովանդակային վավերականացման արդյունքում ձևավորվեց հարցաշարի 23-կետանոց տարբերակը:

Սույն գործիքը հետազոտողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրելու անձնային աճի, կարիերայի կառավարման հետ կապված հիմնախնդիրներ, իսկ պրակտիկայում կարող է կիրառվել հոգեբանության տարբեր ճյուղերում՝ ՄՌԿ-ում, որպես հոգեդիագնոստիկ միջոց՝ գնահատելու անձի պատրաստակամությունը ու ներքին ռեսուրսները սեփական կյանքում փոփոխություններ մտցնելու հարցում: Սույն աշխատանքը «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի ադապտացիայի գործընթացի առաջին փուլն է, բովանդակային վավերականացումը: Այն հիմք է ստեղծում հետագա հետազոտությունների համար, պլանավորվում է հետագայում իրականացնել կառուցողական վալիդության և ներքին հուսալիության չափում:

Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում իրականացվեց «Անձի ինքնափոփոխման ներուժ» հարցաշարի հայերեն տարբերակի ադապտացիա և բովանդակային վավերականացում: 9 փորձագետի մասնակցությամբ իրականացված քանակական (CVI) և որակական վերլուծության արդյունքում ձևավորվեց գործիքի վերջնական՝ 23-կետանոց տարբերակը, որն օժտված է բարձր բովանդակային վավերականությամբ (S-CVI/Ave = 0.90): Այս աշխատանքը ոչ միայն հայկական գիտական դաշտը համալրում է նոր վավերացված գործիքով, այլև ստեղծում է անհրաժեշտ մեթոդաբանական հիմք՝ ատենախոսական ավելի լայն հետազոտության շրջանակներում էմպիրիկորեն ուսումնասիրելու անձի ինքնափոփոխման ներուժի գործառական ազդեցությունը մասնագիտության փոփոխության որոշում կայացնելու վրա:

МАРИАМ МАНУКЯН – ***Оценка содержательной валидности опросника «потенциал самоизменений личности» с использованием метода CVI.–*** Цель данной статьи – представить результаты адаптации и содержательной валидизации армянской версии опросника «Потенциал самоизменений личности» с целью создания инструмента для последующего изучения его влияния на смену профессии в Армении. Опросник направлен на оценку таких ключевых компонентов, как потребность в изменениях, способность к сознательному самоизменению, личностные ресурсы и вера в возможность самоизменений. Языковая адаптация опросника проводилась с использованием процедуры обратного перевода (back-translation), обеспечивающей концептуальную и смысловую эквивалентность оригиналу. В исследовании приняли участие 9 экспертов в области психологии (преподаватели и научные сотрудники вузов РА), на основе оценок которых был проведен смешанный анализ, сочетающий количественный расчет индекса содержательной валидности (CVI) и качественный анализ комментариев

экспертов. В результате анализа, на основе показателей I-CVI (допустимый порог ≥ 0.78) и качественных комментариев, из первоначальных 24 утверждений была сформирована окончательная, 23-пунктная версия опросника. Общий индекс содержательной валидности шкалы (S-CVI/Ave) составил 0.90, что является превосходным показателем. Полученные результаты свидетельствуют о том, что инструмент может эффективно применяться как в исследовательских целях, так и в практике карьерного консультирования и управления персоналом (HRM). Адаптированная версия обладает высокой содержательной валидностью и служит надежной основой для дальнейших психометрических исследований, включая проверку надежности и конструктной валидности.

Ключевые слова: *потенциал самоизменений личности, смена профессии, содержательная валидность, CVI, адаптация опросника, личностный потенциал*

MARIAM MANUKYAN – *Content Validity Assessment of the "Personal Self-Transformation Potential" Questionnaire Using the CVI Method.* – The purpose of this article is to present the results of the adaptation and content validation of the Armenian version of the "Potential for Personal Self-Transformation" questionnaire, with the aim of creating an instrument to study its impact on career change in Armenia. The questionnaire is designed to assess key components such as the need for change, conscious self-transformation ability, personal resources, and belief in the possibility of self-change. The linguistic adaptation of the questionnaire was carried out using the back-translation procedure, ensuring conceptual and semantic equivalence with the original. The study involved 9 experts from the field of psychology (university lecturers and researchers), based on whose ratings a mixed-methods analysis was conducted, combining quantitative (Content Validity Index - CVI) calculation and qualitative analysis of the experts' comments. As a result of the analysis, based on the I-CVI scores (acceptable threshold ≥ 0.78) and qualitative feedback, a final 23-item version of the questionnaire was formed from the initial 24 items. The overall content validity index of the scale (S-CVI/Ave) was 0.90, which is considered an excellent score. The findings suggest that the instrument can be effectively utilized both for research purposes and in career counseling and Human Resource Management (HRM) to assess personal resources. The adapted version possesses high content validity and serves as a reliable basis for future psychometric studies, including reliability testing and construct validation.

Key words: *potential for personal self-transformation, career change, content validity, CVI, questionnaire adaptation, personal potential*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ։

Գրականության ցանկ / References

Гришина Н.В. (2018). «Самоизменения» личности: возможное и необходимое. *Вестник Санкт-Петербургского университета. Психология и педагогика*, *8*(2), 126–138. https://doi.org/10.21638/11701/spbu16.2018.202 / Grishina, N. V. (2018). «Samoizmeneniya» lichnosti: vozmozhnoe i neobkhodimoe ["Self-changes" of personality: possible and necessary]. *Vestnik Sankt-Peterburgskogo universiteta. Psikhologiya i pedagogika [Sankt-Petersburg University Gazette. Psychology and Pedagogy], 8*(2), 126–138.

Гришина Н.В., Манукян В.Р., Муртазина И.Р., Аванесян М.О. (2021). Самоизменения личности: Проблемы, модели, исследования. Коллективная монография. СПб., Изд-во С.-Петерб. ун-та./ Grishina, N. V., Manukyan, V. R., Murtazina, I. R., & Avanesyan, M. O. (2021). *Samoizmeneniya lichnosti: Problemy, modeli, issledovaniya* [Self-changes of personality: Problems, models, research]. Kollektivnaya monografiya. SPb.: Izd-vo S.-Peterb. un-ta.

Манукян, В.Р., Муртазина, И.Р., Гришина, Н.В. (2020). Опросник для диагностики потенциала самоизменений личности. *Консультативная психология и психотерапия*, *28*(4), 35–58. https://doi.org/10.17759/cpp.2020280403/ Manukyan, V. R., Murtazina, I. R., & Grishina, N. V. (2020). Oprosnik dlya diagnostiki potentsiala samoizmeneniy lichnosti [Questionnaire for diagnosing the potential for self-changes of personality]. *Konsul'tativnaya psikhologiya i psikhoterapiya [Counseling Psychology and Psychotherapy],* *28*(4), 35–58. https://doi.org/10.17759/cpp.2020280403

Aluja, A., García, L. F., & García, O. (2002). A comparative study of Zuckerman's three structural models for personality through the NEO-PI-R, ZKPQ-III-R, EPQ-RS and Goldberg's 50-bipolar adjectives. *Personality and Individual Differences*, *33*(5), 713-725.

Polit, D. F., & Beck, C. T. (2006). The content validity index: are you sure you know what's being reported? Critique and recommendations. *Research in Nursing & Health*, *29*(5), 489-497. https://doi.org/10.1002/nur.20147

Taherdoost, H. (2022). What are Different Research Approaches? Comprehensive Review of Qualitative, Quantitative, and Mixed Method Research, Their Applications, Types, and Limitations. *Journal of Management Science & Engineering Research*, *5*(1), 53-63.

Yusoff, M. S. B. (2019). ABC of content validation and content validity index calculation. *Education in Medicine Journal*, *11*(2), 49–54. https://doi.org/10.21315/eimj2019.11.2.6

Zukerman, M. (2007). *Sensation seeking and risky behavior*. American Psychological Association.